

փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան: Ուսումնասիրելու համար փիլիսոփաներու բարոյագիտական գաղափարներն ու տեսութիւնները, հարկ է նաեւ ակնարկ մը նետել, պատմութեան ընթացքին յառաջացած փիլիսոփայական գլխաւոր ուղղութիւններուն վրայ եւ սերտել այդ անուանի իմաստասէրներու փիլիսոփայական ու բարոյագիտական վաստակը:

Արեւմտեան փիլիսոփայութիւնը կը սկսի մ.թ.ա. 6-րդ. դարու առաջին կիսուն, Հին Յունաստանի մէջ: Որպէս առաջին փիլիսոփայ Եւրոպայի մէջ ընդունուած է՝ **Թալէս Միլետոսցին** (յուն.՝ Thalês, 625 – 546 մ.թ.ա.), որ Հնադարեան յունական աւանդութեան մէջ, *եօթը իմաստուններէն*⁽⁴⁾ մէկն էր:

Հնադարեան (Անտիկ) առաջին շրջանի փիլիսոփայութեան կեդրոնը Փոքր Ասիոյ արեւմտեան ափն էր, Յոնիա (Ionia) յունական գաւառի Միլետոս (Miletos) ծովեզերեայ քաղաքին մէջ: Փիլիսոփայութեան այլ կեդրոններ, հետզ-հետէ կը կազմուէին հարաւային Իտալիոյ յունական գաւառի Կրոտոն (Croton) եւ Էլեա (Elea) քաղաքներուն մէջ:

Հետագային, մօտաւորապէս մ.թ.ա. 5-րդ դարու կիսուն, **Անաքսագորասի** (յուն.՝ Anaxagóras, 500 – 428 մ.թ.ա.) միջոցով, յունական փիլիսոփայութիւնը կը փոխադրուէր Աթէնք:

Աթէնքի մէջ, կը սկսէր փիլիսոփայութեան՝ յունական *Դասական Շրջանը* (Classical Era): Այս ժամանակաշրջանի նշանաւոր յոյն փիլիսոփաներն են.-

- **Սոկրատէս** (Socrates, յուն.՝ Sôkrátês, 470 – 399 մ.թ.ա.), ասոր աշակերտը՝
- **Պլատոն** (Plato, յուն.՝ Plátôn, 427 – 347 մ.թ.ա.) եւ այս վերջինին աշակերտը՝
- **Արիստոտէլ** (Aristotle, յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.):

Իսկ Սոկրատէսէն առաջ եւ մինչեւ Սոկրատէս երկարող ժամանակաշրջանը այսօր կը կոչուի՝ «Նախասոկրատեան շրջան» (Pre-Socratic Era):

Մեծն Ալեքսանդրի (356 – 323 մ.թ.ա.) օրով, հին Յունաստանի սահմանները անհամեմատ կ'ընդարձակուին եւ կը յառաջանայ *հելլենական մշակոյթը*, իր փիլիսոփայական զանազան ուղղութիւններով: Այս շրջանին, նշանաւոր կը դառնան հետեւեալ դպրոցները կամ ուղղութիւնները.-

- **Էպիկուրական** (Epicureanism),
- **Ստոյիկեան** (Stoicism)
- **Կասկածապաշտական** կամ **սկեպտիկական** (Scepticism) եւ
- **Նոր-Պլատոնական** (Neo-Platonism):

Ստոյիկեան շարժումի ընթացքին (մ.թ.ա. Ա. դար), յոյներու կողմէ սկսած փիլիսոփայութիւնը կը փոխադրուէր Հռոմ, որ քաղաքական տեսակէտէն շատ աւելի զօրացած էր:

Հնադարեան (Անտիկ) փիլիսոփայութեան **Հելլենիստական Շրջանի**

(4) **Եօթը իմաստունները** (յուն.՝ heptá sophóí, անգլ.՝ Seven Sages), Հնադարեան Յունաստանի մէջ յատուկ կարեւորութիւն ունեցող անուանի անձնաւորութիւններու եօթնեակ, որու առաջին տեղը կը գրաւէ **Թալէս Միլետոսցին** (յուն.՝ Thalês):